ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«22» հոկտեմբեր 2018 թ. N 172-Լ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Երևան
«22» հոկտեմբեր 2018թ.

Հավելված
բնապահպանության նախարարի
2018 թվականի հունիսի «22» -ի
N 172 - Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Անտառային կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) բնապահպանության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) ենթակա մարմին է:
2. Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:
3. Կոմիտեն գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:
4. Կոմիտեի անվանումն է՝

1) հայերեն՝ Անտառային կոմիտե,
2) ռուսերեն՝ Лесной комитет,
3) անգլերեն՝ Committee of Forest,
4) ֆրանսերեն՝ Comité de la forêt:

5. Կոմիտեն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Կոմիտեն կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
6. Կոմիտեի կառուցվածքում ընդգրկվում են Կոմիտեի նախագահի, Կոմիտեի նախագահի տեղակալի, Կոմիտեի նախագահի օգնականի, Կոմիտեի նախագահի տեղակալի օգնականի, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները:
7. Կոմիտեին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:
8. Կոմիտեի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Արմենակյան 129:

II. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Կոմիտեի նպատակներն են՝

1) պետական անտառների կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման ապահովումը:

10. Կոմիտեի խնդիրներն են՝

1) պետական անտառների արտադրողականության բարձրացման միջոցառումների իրականացման ապահովումը.

2) պետական անտառների կենսաբազմազանության պահպանության ապահովումը.

3) պետական անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման ապահովումը.

4) անտառային հողերի և անտառների վերաբերյալ հանրությանը հստակ, ամբողջական և հավաստի տեղեկատվության տրամադրումը:

III. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Կոմիտեի գործառույթներն են՝

1) անտառային պետական ծառայությանը օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումը.

2) պետական անտառների և անտառային հողերի պետական հաշվառման կազմակերպումը, անտառային պետական կադաստրի վարումը.

3) պետական անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրերի մշակումը՝ համագործակցելով նաև միջազգային համապատասխան կառույցների հետ.

4) պետական անտառների անտառաշինության աշխատանքների կազմակերպումը և հսկողությունը.

5) անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում բնափայտի մթերումն իրականացնելու համար փաստացի ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություններ տրամադրելու նպատակով մասնագիտական հանձնաժողովների ստեղծումը և եզրակացությունների համաձայն տարեկան իրականացվելիք հատումների ծավալների հաստատումը.

6) անտառային մոնիթորինգի իրականացումը.

7) անտառային բնագավառի ինստիտուցիոնալ բարեփոխումների ու ֆինանսական ռազմավարության մշակմանը մասնակցությունը, հատկացված ֆինանսական միջոցների կառավարումն, ինչպես նաև դրանից բխող ներդրումային ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը, պայմանագրերի կնքումը.

8) պետական անտառային հողերում հրդեհային անվտանգության, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերի մշակումը և կազմակերպումը.
9) պետական անտառային տնտեսությունների վարման կազմակերպումը.
10) պետական անտառների վերականգնման և անտառապատման, ինչպես նաև սելեկցիոն-սերմնային տնտեսության վարման, ագրոանտառաբուծության, տնկարանային տնտեսության ընդլայնման, անտառամելիորատիվ միջոցառումների կազմակերպումը.
11) շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա անտառավերականգնման, անտառապատման, անտառային ճանապարհների կառուցման և վերանորոգման նախագծերի, անտառային ոլորտին վերաբերող այլ փաստաթղթերի վերաբերյալ համաձայնության տրամադրումը.
12) պետական անտառների տիրապետումը և օգտագործումը.
13) սահմանված կարգով անտառատնկարկներն անտառների շարքը փոխադրելու հետ կապված գործառույթների իրականացումը.
14) անտառային հողերի և անտառների՝ ըստ նպատակային նշանակության դասակարգելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.
15) օրենքով սահմանված դեպքերում արտահանվող և ձեռք բերված փայտանյութի կամ դրանից պատրաստված ապրանքների համապատասխանության մասին եզրակացության տրամադրումը.
16) պետական անտառների արտադրողականության բարձրացման, անտառավերականգնման, անտառապատման և դրանց խնամքին ուղղված պետական նպատակային ծրագրերի իրականացման կազմակերպումը.
17) Կոմիտեի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններին և հիմնարկներին ամրացված գույքի օգտագործման ու պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը.
18) անտառային օրենսդրության խախտումների կանխարգելման և հայտնաբերման աշխատանքների կազմակերպումը.
19) անտառներում և անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման համար համաձայնության տրամադրումը.
20) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական անտառների կամ անտառային հողերի նկատմամբ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի ձեռքբերման համաձայնության տրամադրումը, հայտերի ընդունումը և մրցույթների կազմակերպումը.

21) հրդեհավտանգ ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում, պետական անտառների առանձին հատվածներում քաղաքացիների և տրանսպորտային միջոցների՝ օրենքով նախատեսված դեպքերում մուտքի արգելում կամ սահմանափակում, ինչպես նաև այդ հատվածներում որոշակի աշխատանքների իրականացումը.

22) Կոմիտեի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը.

23) մասնակցություն միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովմանը և անտառային ոլորտում իրականացվելիք նախատեսվող միջազգային ծրագրերի մշակմանը.

24) անտառային օրենսդրության խախտումների հայտնաբերման ու կանխարգելման կազմակերպում և դրա մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանական պետական վերահսկողություն իրականացնող մարմնին և իրավապահ մարմիններին տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև համատեղ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

25) Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 26-րդ հոդվածով, ինչպես նաև օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում վարչական վարույթի իրականացումը, համապատասխան որոշումների ընդունումը.

26) ծառայողների և անտառային ոլորտի մասնագետների ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը.

27) գիտահետազոտական աշխատանքների, անտառային արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների և առաջավոր փորձի ներդրման կազմակերպումը.

28) անտառային ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման, այդ թվում՝ էկոլոգիական կրթության աշխատանքների կազմակերպումը.

29) իր ենթակայության անտառային հողերում գտնվող՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը.

30) պետություն-մասնավոր հատված գործընկերության շրջանակներում ներդրումային ծրագրերի մշակումը և իրականացումը.

31) համայնքային անտառների ստեղծմանն ու զարգացմանն աջակցությունը.

32) անտառային արդյունքի արտադրության և վերամշակման հզորությունների ստեղծումը.

33) հանգստի, զբոսաշրջության, այդ թվում՝ էկոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակումը և իրականացումը.

34) ագրոանտառաբուծության զարգացմանն աջակցությունը.

35) օրենքներով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

IV. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Կոմիտեի կառավարումն իրականացնում է բնապահպանության նախարարը (այսուհետ՝ նախարար):

13. Նախարարը՝

1) հաստատում է Կոմիտեի կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կատարում կանոնադրության փոփոխություններ.

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները.

3) իրականացնում է Կոմիտեի գործունեության վերահսկողությունը.

4) լսում է Կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում Կոմիտեին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

6) հաստատում է տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

14.Կոմիտեն ղեկավարում է Կոմիտեի նախագահը:

15. Կոմիտեի նախագահին անմիջական հաշվետու են Կոմիտեի նախագահի տեղակալը, գլխավոր քարտուղարը, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների, հիմնարկների ղեկավարները, Կոմիտեի նախագահի օգնականը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

16. Կոմիտեի նախագահին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր քարտուղարի տեղակալը:

17. Կոմիտեի նախագահը հաշվետու է Կառավարությանը, վարչապետին և նախարարին:

18. Կոմիտեի նախագահը՝

1) պատասխանատու է Կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) իրականացնում է Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կառավարումը.

4) օրենքով կամ Կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) հաստատում է ներքին կարգապահական կանոնները.

6) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալի, գլխավոր քարտուղարի հանձնարարականները.

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարների Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

10) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

19. Կոմիտեի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է առաջին տեղակալը, իսկ առաջին տեղակալի բացակայության դեպքում՝ Կոմիտեում Կոմիտեի նախագահի տեղակալի առավել երկար ստաժ ունեցող տեղակալը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

20. Կոմիտեի հաստիքացուցակը Կոմիտեի նախագահի առաջարկությամբ հաստատում է նախարարը:

21.Կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) գործում է Կոմիտեի նախագահից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն (գործունեությունը) իրեն հանձնարարված ոլորտում.

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակայությանը հանձնված կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է Կոմիտեի նախագահի հանձնարարականները, ապահովում է Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կողմից Կոմիտեի նախագահի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Կոմիտեի նախագահին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ստանում է գլխավոր քարտուղարի աջակցությունը, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ.

5) իրականացնում է Կոմիտեի նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

22.Կոմիտեի նախագահի տեղակալը կարող է ունենալ օգնական: Կոմիտեի նախագահի տեղակալն իր օգնականի անմիջական ղեկավարն է: Կոմիտեի նախագահի տեղակալի օգնականը անմիջական հաշվետու է Կոմիտեի նախագահի տեղակալին:

23.Կոմիտեի գլխավոր քարտուղարը՝

1) առանց լիազորագրի՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

2) Կոմիտեի նախագահի հրամանով իրականացնում է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործառույթների և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը.

3) օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կոմիտեին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) Կոմիտեի նախագահին ներկայացնում է Կոմիտեի տարեկան հաշվեկշիռը.

6) Կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կազմակերպական հարցերի վերաբերյալ.

7) Կոմիտեի նախագահին ներկայացնում է աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների մասով՝ իր իրավասության շրջանակներին վերաբերող տեղեկատվություն, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հաշվետվություն.

8) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է Կոմիտեի նախագահի տեղակալի, կազմակերպության և այլ պետական մարմինների հետ.

9) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակա կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է Կոմիտեի նախագահի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Կոմիտեի նախագահին.

10) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից պատրաստված, ինչպես նաև իր և (կամ) Կոմիտեի նախագահի և (կամ) Կոմիտեի նախագահի տեղակալի անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

11) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է անհատական հրամաններ, տալիս հանձնարարականներ:

24. Գլխավոր քարտուղարը կարող է ունենալ տեղակալ, որը փոխարինում է նրան բացակայության ժամանակ: Գլխավոր քարտուղարն իր տեղակալի անմիջական ղեկավարն է: Գլխավոր քարտուղարի տեղակալն անմիջական հաշվետու է գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարի տեղակալների թիվը սահմանում է վարչապետը:

V. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

25. Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) անտառների և անտառային հողերի կառավարման վարչություն,

2) անտառների հաշվառման և կադաստրի վարման բաժին:

26. Կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն,

2) իրավաբանական վարչություն,

3) անձնակազմի կառավարման բաժին,

4) ներքին աուդիտի բաժին,

5) գնումների բաժին,

6) արտաքին կապերի բաժին,

7) տնտեսական բաժին,

8) ընդհանուր բաժին:

27. Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Կոմիտեի նախագահը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

VI. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՅՔԸ

28. Կոմիտեն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:
29. Կոմիտեի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով Կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:
30. Կոմիտեին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը:
31. Կոմիտեն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Կոմիտեն վարում է հաշվապահական հաշվառում և օրենքով սահմանված կարգով ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ:
33. Կոմիտեի ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման օրենքով սահմանած կարգով և դեպքերում: